ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Մարտունի **09.04.2026թ.**

ժ/10:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյանը,անդամներ՝ Ս. Աբրոյանը, Վ.Թամոյանը, Կ. Դավթյանը, Թ. Դավթյանը

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
   Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը
   1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
   2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
   3.Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. **«ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:**

2.1 **«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ** հայտում արձանագրվել էին հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց **«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ** կողմից ներկայացրած շտկումները :

2.3 Մասնակիցի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից նշված կազմակերպությունների հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 **«ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-26/01»** ծածկագրով գնման հրավերի 1-ին չափաբաժնի մասով ընտրվածմասնակից է ճանաչվում **«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ -Ն**, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ սահմանելէ 10 օրացուցային օր՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3.3 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում (միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրով) ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ _____ Ս. Աբրոյան

_____ Վ. Թամոյան

_____ Կ. Դավթյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան